

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 3

Խնճի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարրերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևարուղը:**


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձիշտ լրացնից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1 Ո՞ր պրոյեկցիայով է պատկերված քարտեզը:

- 1) կոնային
- 2) ազիմուտային
- 3) գլանային
- 4) հասարակածային



2 Արշավախումբը իր նպատակակետին հասնելու համար պետք է շարժվի հարավ-արևելք: Արշավախումբը ո՞ր ազիմուտով պետք է շարժվի:

- 1)  $315^{\circ}$
- 2)  $45^{\circ}$
- 3)  $225^{\circ}$
- 4)  $135^{\circ}$

3 Երկու կետերի ուղիղ գծով հեռավորությունը քարտեզի վրա 16սմ է, իսկ ուղիղ գծով իրական հեռավորությունը՝ 24 կմ: Քարտեզի անվանական մասշտաբը կլինի.

- 1) 1 սմ-ում  $0,7$  կմ
- 2) 1սմ-ում  $1,5$  կմ
- 3) 1սմ-ում  $384$  կմ
- 4) 1սմ-ում  $15$  կմ

4 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Երկու գնդաձևության շնորհիվ նույն պահին երկու մակերևույթի տարրեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարրեր անկյան տակ:
- 2) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված քան` ընեռներից:
- 3) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օրյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:
- 4) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ զրոյական միջօրեականն է:

5 Օրվա ընթացքում երկու անգամ (ցերեկը ջրավազանից դեպի ցամաք, իսկ զիշերը՝ ցամաքից դեպի ջրավազան) ուղղությունը փոխող քամին կոչվում է.

- 1) ցիկլոն
- 2) բրիզ
- 3) մուսսոն
- 4) պասսատ

(77-78) Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են՝  $-1^{\circ}, -4^{\circ}, -6^{\circ}, -2^{\circ}, 7^{\circ}, 16^{\circ}, 10^{\circ}, 4^{\circ}$ :

77 Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնություն (ամպլիտուդ):

78 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

(79-80) Երկրում բնակչության քիվը  $10\,000\,000$  մարդ է, որից գյուղական բնակչությունը կազմում է  $6\,000\,000$  մարդ: Երկրի տարածքը կազմում է  $80\,000 \text{km}^2$ :

79 Որոշել բնակչության միջին խտությունը:

80 Որոշել ուրբանիզացման մակարդակը:

6 Օվկիանոսի հատակի  $200\text{-}2500\text{m}$  խորությամբ կտրուկ խորացող մասը կոչվում է.

- 1) մայրցամաքային լանջ
- 2) մայրցամաքային ծանծաղուտ
- 3) փողոցակ (անդունի)
- 4) հորստ

7 Սառցադաշտի դանդաղ շարժման արդյունքում, նրա կողմից քերված, տարված քայլայված նյութերից առաջացած թմբաշարերը կոչվում են.


- 1) խառնարաններ
- 2) մորեններ
- 3) դյուններ
- 4) բարխաններ

8 Լեռան գագարին օդի ջերմաստիճանը  $-14^{\circ}$  է, իսկ նույն պահին ստորոտում՝  $+4^{\circ}$ : Օդի ճնշումը գագարին  $380\text{m}$  է: Որքա՞ն կլինի օդի ճնշումը լեռան ստորոտին (յուրաքանչյուր  $1000\text{m}$ -ին ջերմաստիճանի փոփոխությունը ընդունել  $6^{\circ}$ ):

- 1)  $80\text{m}$
- 2)  $395\text{m}$
- 3)  $680\text{m}$
- 4)  $365\text{m}$

9 Ուկիեֆի կտրվածքի նկարում ո՞ր տառով նշանակված կետում է մքնուրոտային ճնշումը ամենացածրը:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ



10 Նկարում արևմուտքից արևելք ուղղությամբ ո՞ր մայրցամաքի ուկիեֆի կտրվածքն է պատկերված:



- 1) Հարավային Ամերիկա
- 2) Աֆրիկա
- 3) Ավստրալիա
- 4) Անտարկտիդա

11 Ո՞ր գույզում տրված ծովերն են միմյանց հետ միացած նեղուցով:

- 1) Սարգասյան և Բաֆինի ծովերը
- 2) Չուկոտյան և Բերինգի ծովերը
- 3) Հարավշխնական և Օխոտի ծովերը
- 4) Թիմորի և Կորալյան ծովերը

12 Շմապոդոլային հողերը բնորոշ են.

- 1) հասարակածային խոնավ մշտադալար անտառների տարածման շրջաններին
- 2) բարեխառն գոտու խառն անտառների տարածման շրջաններին
- 3) բարեխառն գոտու լայնատերև անտառների տարածման շրջաններին
- 4) մերձարևադարձային գոտու սավանների և նոսր անտառների տարածման շրջաններին

13 Այդ գետը հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞րն է այդ գետը:

- 1) Օքը
- 2) Վոլգան
- 3) Ենիսեյը
- 4) Մակենզին

14 Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Արևադարձային անապատները Հարավային Ամերիկայում տարածվում են Ատլանտյան օվկիանոսի առափնյա նեղ շերտով:
- 2) Հարավամերիկյան պլատֆորմի արևելյան մասում ընկած խաղաղօվկիանոսյան գետսինկինալում ձևավորվել են Անդյան լեռները:
- 3) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասում կլիման ցամաքային է:
- 4) Հարավային Ամերիկայի տարածքի մեծ մասը պատկանում է ներքին հոսքի ավազանին:

15 Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Խոշոր գետերի քած-տարած նյութերը՝ գետաբերուկները, կուտակվելով առաջացնում են հարթավայրեր:
- 2) Երկրի մակերեսույթից ներծծվող ջուրը, հանդիպելով լուծվող նյութերի (կրաքար, կավիճ), լուծում հեռացնում է դրանք՝ առաջացնելով քարայրներ:
- 3) Հրաբխի ժայթքման ժամանակ մղանցքի վերևում առաջացած ձագարած գոգավորությունը կոչվում է խառնարան:
- 4) Երկրակեղեկի մայրամաքային տիպում բազալտային շերտը գտնվում է նստվածքային և գրանիտային շերտերի միջև:

16 «Լիճ-քափվող գետ» սկզբունքով կազմված գույզերից ո՞րն է ճիշտ:

- 1) Սևանա-Մասրիկ
- 2) Վերին-Մակենզի
- 3) Ուրմիա-Տիգրիս
- 4) Տանգանիկա-Զամբեզի

75 Քարտեզի վրա ՀՀ լանդշաֆտային ո՞ր գոտին է նշված Բ տառով:



76 Հասարակածի վրա գտնվող երկու կետերից մեկը գտնվում է արլ. ե. 65°-ի, մյուսը՝ արմ. ե. 130°-ի վրա: Որքա՞ն կլիմի նրանց միջև ամենակարծ հեռավորությունը արտահայտված կլիմմետրով:

71

Ո՞ր զույգում տրված երկրներն են ցորենի արտադրությամբ գտնվում աշխարհի առաջատար եռյակում:

- 1) Նորվեգիա և Ինդոնեզիա
- 2) Շվեյցարիա և Իսլանդիա
- 3) Լեհաստան և Իրան
- 4) Չինաստան և ԱՄՆ

72

Տրվածներից ո՞րը բնակավայրերի օդային ավազանի մաքրության պահպանությանն ուղղված միջոցառում չէ:

- 1) փոշեծծիչ և գազակլանիչ կայանքների տեղադրումը
- 2) կանաչապատ տարածքների ստեղծումը
- 3) բնակավայրերը շրջանցող ավտոմայրուտիների ստեղծումը
- 4) արվակուլտուրայի զարգացումը


73

Կենդանական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ՝

- 1) արոտաշրջանառության կազմակերպումը
- 2) հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
- 3) կենսատեխնիկական միջոցառումների կիրառումը
- 4) կենդանիների կլիմայավարժեցումը

74

Զարտեզի վրա Բ տառով նշված տարածքներում ո՞ր լեզուն է գերակշռում:



- 1) Եբրայերեն
- 2) Բուրյերեն
- 3) արաբերեն
- 4) պարսկերեն

17

«Հարթավայր-աշխարհանա» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Գվիանական սարահարթ-Աֆրիկա
- 2) Մեծ հարթավայրեր-Ասիա
- 3) Պադանի դաշտավայր-Ավստրալիա և Օվկիանիա
- 4) Մերձատլանտյան դաշտավայր-Ամերիկա

18

Ո՞ր ծովային հոսանքներն են ազդեցություն թողնում Աֆրիկայի կլիմայի ձևավորման վրա:

- 1) Բրազիլական և Պերուական
- 2) Գվինեական և Բենգալյան
- 3) Գվիանական և Գոլֆստրիմ
- 4) Հյուսիսատլանտյան և Մուստնային

19

Զարտեզի վրա ո՞ր տառով է նշված Ալբիատիկ ծովը:

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



20 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Բուդապեշտ մայրաքաղաքը:

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

21 Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական ու մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է միասնական ու ամրակութ կոչվում է.

- 1) ազգային համախմբում
- 2) ժողովրդագրական ճգնաժամ
- 3) ազգերի ծովում
- 4) ժողովրդագրական քաղաքականություն

22 Գյուղատնտեսական արտադրության վարման այն եղանակը, երբ գյուղատնտեսական մթերքների ավելացումը ծերը է բերվում ցանքատարածությունների ընդարձակման և անասունների զլատաքանակի աճի հաշվին կոչվում է.

- 1) ինտենսիվ գյուղատնտեսություն
- 2) «կանաչ հեղափոխություն»
- 3) ազուրդյունաբերական համակիր
- 4) էքստենսիվ գյուղատնտեսություն

23 Այդ երկիրը Հարավային Եվրոպայի խոշոր երկրներից է: Բնակչության գերակշիռ մասը ուղղափառ քրիստոնյաներ են: Զարգացած է մերձարևադարձային պտղաբուծությունը (ձիթապտուղ, խաղող, ցիտրուսներ): Ո՞րն է այդ երկիրը:

- 1) Իտալիան
- 2) Ալբանիան
- 3) Իսպանիան
- 4) Հունաստանը

24 Երկրի բնակչության թիվը 4680000 մարդ է: Մեկ բնակչին բաժին է հասնում 1,8 հա գյուղատնտեսական հողահանդակ: Երկրի գյուղատնտեսական հողահանդակների մակերեսը կիմի:

- 1) 26000000 հա
- 2) 8424000 հա
- 3) 2600000 հա
- 4) 84240000 հա

25 «Ժողովուրդ-տարածված կրոն» սկզբունքով կազմված զույգերից ո՞րն է սխալ:

- 1) պարսիկներ-մահմեդականություն
- 2) ճապոնացիներ-սինտոյականություն
- 3) ալբանացիներ-քրիստոնություն
- 4) մոնղոլներ-բուդապյականություն

65 ՀՀ լեռնազորության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք գալարաձև տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:
- 2) Սևանա լիճը եղրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
- 3) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնազագագաթը Կապուտջուղն է:
- 4) Աշոցքի սարահարթում են գտնվում Ծղուկ և Մեծ Խշանասար գագաթները:

66 ՀՀ կիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 2) Համբավետության տարածքը ամբողջությամբ գտնվում է բարեխառն կիմայական գոտում:
- 3) ՀՀ տարածքում ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Արագածի լանջին՝ Քարի լճի շրջանում:
- 4) Տարվա ընթացքում տեղումների նվազագույն քանակը թափվում է գարնան ամիսներին:

67 ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Բնակչության խտությունը մեծ է Արմավիրի մարզում:
- 2) Ազգային կազմով գրեթե միատարր երկիր է (մոտ 98%-ը հայեր):
- 3) Բնակչության խտության ցուցանիշն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
- 4) Ամենաբարձրադիր բնակավայրը գտնվում է Տավուշի մարզում:

68 ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Այսումինի արդյունաբերության կենտրոնը Երևանն է:
- 2) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գումավոր մետաղածովության տեղաբաշխման հետ:
- 3) ՀՀ էլեկտրակայանների ընդհանուր թվում առավել շատ է ջէկ-երի քանակը:
- 4) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Արմավիր և Գյումրի քաղաքները:

69 Տրվածներից ո՞րն է բնորոշ և Սյունիքի, և Վայոց ձորի մարզերին:

- 1) Աչքի են ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով:
- 2) Մարզերում գերակշռում են մակերևույթի հարք ձևերը:
- 3) Սահմանակից են Նախիջևանի ԻՀ-ին:
- 4) Տուֆի, պեղիսի պաշարներով ամենահարուստ մարզերն են:

70 ՀՀ ո՞ր մարզում է գտնվում Շիկահողի արգելոցը:

- 1) Արմավիրի
- 2) Տավուշի
- 3) Արարատի
- 4) Սյունիքի

60

**Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Բնակչության վերաբերության առաջին տիպի երկրներում իրականացվում է ծննդյան կրծատմանն ուղղված քաղաքականություն:
- 2) Բնակչության բնական աճը բնակչության թվի փոփոխությունն է միզրացիայի հաշվին:
- 3) Բնակչության վերաբերության երկրորդ տիպի երկրներին բնորոշ է դեպուլյացիան:
- 4) Բնակչության վերաբերության երկրորդ տիպին են պատկանում Ասիայի, Աֆրիկայի զարգացող երկրները:

61

**Տրված երկրներից որի՞ էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում է գերակշռում ջրեկ-ների բաժինը:**

- 1) Նորվեգիա
- 2) Ավստրալիա
- 3) Ալժիր
- 4) Ֆրանսիա

62

**Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում գերակշռում է ջրեկ-ների բաժինը:
- 2) Աշխարհի ամենաբարձր ուրբանիզացման մակարդակ ունեցող երկիրն է:
- 3) Երկրի արևելքում են տեղաբաշխված զիսավոր արդյունաբերական կենտրոնները:
- 4) Արտահանության կառուցվածքում մեծ է ածխի ու երկարաբարի բաժինը:

63

**Քննութագրումով որոշել երկիրը:**

Տարածքի մեծությամբ աշխարհի գերխոշոր երկրներից է: Ներկայիս բնակչության մեծամասնությունը ձևավորվել է ներգաղթի արդյունքում: Բնակչության 90%-ը բնակվում է երկրի հարավյային սահմանի երկայնքով: Երկիրը գտնվում է զարգացման հետարյունաբերական փուլում, տնտեսության կառուցվածքում շատ բարձր են ծառայությունների ոլորտի, մշակող արդյունաբերության բաժնները: Միջազգային մասնագիտացման ճյուղերից է փայտամթերումը: Այդ երկիրն է՝

- 1) Չինաստան
- 2) Հնդկաստան
- 3) Բրազիլիա
- 4) Կանադա

64

**Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Լեռնաշխարհից արևմուտք տարածվում է Իրանական բարձրավանդակը:
- 2) Զբաղեցնում է մոտ 200հազ. կմ<sup>2</sup> մակերես:
- 3) Գտնվում է Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտու կենտրոնական մասում:
- 4) Սև ծովի ափին գուգահեռ տարածվում են Արևելապոնտական լեռները:

26

**«Պետություն-թերակղզի» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Օման-Արաբական
- 2) Պորտուգալիա - Պիրենեյան
- 3) Նորվեգիա-Սկանդինավյան
- 4) Նեպալ-Հնդկաչին

27

**«Արդյունաբերության ճյուղ-հումք» սկզբունքով տրված գույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Էլեկտրաէներգետիկա-բնական գազ
- 2) Քիմիական արդյունաբերություն-նավթ
- 3) Աև մետաղաձուլություն-երկարաբար
- 4) Աննի արդյունաբերություն-բամբակ

28

**Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Ֆրանսիայում խաղողագործությունը տարածված է ամենուրեք, բացառությամբ հյուսիսի և հյուսիս-արևմուտքի:
- 2) Կորսիկա կղզին պատկանում է Ֆրանսիային:
- 3) Ֆրանսիան ակտիվորեն վարում է բնակչության բնական աճը խրախուսող ժողովրդագրական քաղաքանություն:
- 4) Ֆրանսիան ալյումինի սեփական պահանջարկը բավարարում է բացառապես ներկրված ալյումինի գլանվածքի շնորհիվ:

29

**Ո՞ր գույգում տրված երկրներում է բնակչության մեծ մասը դավանում իսլամ:**

- 1) Ինդոնեզիայում և Աֆրանստանում
- 2) Արգենտինայում և Մեքսիկայում
- 3) Վիետնամում և Լաոսում
- 4) Իսրայելում և Վրաստանում

30

**Ո՞ր գույգում տրված երկրը ունեն անկավային տարածք:**

- 1) Չաղը և Նիգերը
- 2) ԱՄՆ-ը և Ռուսաստանը
- 3) Ռումինիան և Սուլդուվան
- 4) Սան Սարինոն և Լեսոտոն

31

**«Պետություն-բնական հարուստ ռեսուրսներ» սկզբունքով կազմված գույգերից ո՞րն է սխալ:**

- 1) Ճապոնիա-ջյուղատնտեսական հողահանդակներ
- 2) Վրաստան-մանգան
- 3) Նորվեգիա-ջրաէներգետիկ ռեսուրսներ
- 4) Բրազիլիա-երկար

32

**Ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) «Կանաչ հեղափոխությունը» 21-րդ դարի երևոյք է և բնորոշ է աշխարհի զարգացած երկրներին, հատկապես ԱՄՆ-ին, Գերմանիային և Շվայցարիային:
- 2) Այժմ երկրագնդի մեջ բնակչի հողային ռեսուրսներով ապահովածությունը 20-րդ դարի կեսերի համեմատ աճել է:
- 3) Հետարյունաբերական փոլում գտնվող երկրներում Համախառն ներքին արդյունքի մեջ (ՀՆԱ) զյուղատնտեսության բաժինը գերազանցում է 50%-ը:
- 4) Աշխարհում էլեկտրական արտադրության մեջ ամենամեծ բաժին ունեն ջերմաէլեկտրակայանները (ՁԷԿ):

33

**Ո՞ր զույգում տրված երկրներում է բնակչության բնական աճը կազմում մինչև 10%:**

- 1) Եգիպտոս և Նիգերիա
- 2) Չինաստան և Շապոնիա
- 3) Աֆղանստան և Նեպալ
- 4) Հնդկաստան և Բանգլադեশ

34

**Աշխարհում ածխի արդյունահանմամբ առաջատար երկրներ են.**

- 1) Աղրբեջանը և Իրանը
- 2) Իտալիան և Հունաստանը
- 3) Հնդկաստանը և Չինաստանը
- 4) Ֆրանսիան և Շվեյցարիան

35

**Ո՞ր դաշտն է ընկած Արաքսի հովտում:**

- 1) Բասենի դաշտը
- 2) Երզնկայի դաշտը
- 3) Ալաշկերտի դաշտը
- 4) Մշո դաշտը

36

**Տրված «գետ-վտակ» զույգերից ո՞րն է սիսակ:**

- 1) Արևմտյան Եփրատ-Կուր
- 2) Կուր-Մծարքան
- 3) Ճորժի-Օլիի
- 4) Արաքս-Ախուրյան

37

**ՀՀ-ում ամպամած օրերի թիվն ամենամեծն է.**

- 1) Հարավ-արևելյան շրջանում (Անդրի)
- 2) Հյուսիս-արևելյան շրջանում (Խջևան)
- 3) Արագածի գագաթամերձ մասում
- 4) Արարատյան դաշտում (Երասխ)

54

**Տրված «ապարատեսակ - ծագում» զույգերից ո՞րն է ճիշտ:**

- 1) կրաքար - փոխակերպային (մետամորֆային)
- 2) մարմար - նատվածքային
- 3) գրանիտ - նատվածքային
- 4) բազալտ - հրային (մագմային)

55

**Տրված օվկիանոսային հոսանքներից ո՞րն է անցնում Եվրասիայի հարավային ափերով:**

- 1) Գոլֆստրիմ
- 2) Կուրոսին
- 3) Մուսսոնային
- 4) Կանարյան

56

**Տրված պնդումներից ո՞րն է բնորոշ Աֆրիկայի սավաննաների և նորանտառների բնական գոնային:**

- 1) հիմնականում տարածված կենդանատեսակներն են արջը, գայլը, աղվեսը
- 2) տարածվում է հիմնականում մերձհասարակածային նաև հասարակածային (արևելքում) ու արևադարձային կլիմայական գոտիներում
- 3) հողային ծածկում գերակշռում են պողպղուային և ճմապղպղուային հողերը
- 4) հիմնականում տարածված բուսատեսակներն են ֆիկոսը, կառչուկատու հևեան, փաթաթվող լիանները

57

**Ո՞ր ժամանակաշրջանում են վարարում Աֆրիկայի մերձհասարակածային գոտու գետերը:**

- 1) ողջ տարվա ընթացքում
- 2) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը
- 3) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը
- 4) յուրաքանչյուր կիսագնդի ձմռանը

58

**Տրված շարքերից որի՞ բոլոր աշխարհագրական օբյեկտներն են զտնվում Հարավային Ամերիկայում:**

- 1) Օրինոկոյի դաշտավայր, Ռուիս հրաբուխ, Պոռպոն լիճ
- 2) Պարտանի դաշտավայր, Վինտոն լեռ, Խասիկ-Կուլ լիճ
- 3) Լա - Պլատայի դաշտավայր, Օրիսարա հրաբուխ, Էրի լիճ
- 4) Լավրենտինյան սարահարք, Կոտուպախի հրաբուխ, Սեծ Արջի լիճ

59

**Ո՞ր զույգում տրված երկրներն են միապետություններ:**


- 1) Իոլանդիա և Իտալիա
- 2) Թուրքիա և Աղրբեջան
- 3) Բելգիա և Շվեյցարիա
- 4) Պորտուգալիա և Ֆրանսիա

## Բ մակարդակ

51

Քարտեզի հատվածի վրա ո՞ր տառով նշված սլաքն է ցույց տալիս հյուսիսը:

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



52

Ժամը քանիսը կլինի 5-րդ ժամային գոտում գտնվող բնակավայրում, եթե 8-րդ ժամային գոտում գտնվող բնակավայրում ժամը 18<sup>00</sup>-ն է:

- 1) 23<sup>00</sup>
- 2) 13<sup>00</sup>
- 3) 15<sup>00</sup>
- 4) 21<sup>00</sup>

53

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հասարակածային լայնություններում գերիշխում է մթնոլորտային բարձր ճնշման մարզը:
- 2) Զերմաստիճանի բարձրացումից մթնոլորտային ճնշումը բարձրանում է:
- 3) Մթնոլորտի կազմում թթվածնի քանակը գերազանցում է ազոտի քանակին:
- 4) Մթնոլորտային օդը տաքանում է Երկրի մակերևույթից ստացած ջերմության հաշվին:

38

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Քասաղը Սեծամորի աջակողմյան վտակն է և սկիզբ է առնում Կարսի սարահարթից:
- 2) ՀՀ ջրային պաշարների մեծ մասը ձևավորվում է հարևան տարածքներից՝ Արար գետի ջրային պաշարների հաշվին:
- 3) ՀՀ գետային ցանցը առավել զարգացած է Կուրի ավազանում և Զանգեզուրի ծալքաբեկորավոր լեռների շրջանում:
- 4) ՀՀ-ում ամենամեծ հանքայնացում ունեն հրաբխային մարզի ջրերը:

39

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Եզրիների մեծ մասն ապրում է Տավուշի և Գեղարքունիքի մարզերի գյուղական համայնքներում:
- 2) ՀՀ-ում բնակչության միջին խտությունը սահմանակից Երկրների համեմատությամբ ցածր է:
- 3) 1960-ական թվականներից հետո ընկած ժամանակահատվածում ՀՀ բնակչության ծննդիության ցուցանիշը աճել է:
- 4) ՀՀ-ին բնորոշ է բնակչության խտության աստիճանական նվազումն ըստ տեղանքի բարձրության:

40

ՀՀ-ում ուղղաշրջանառությամբ տրանսպորտի ո՞ր տեսակն է առաջատարը:

- 1) ջրայինը
- 2) երկարուղայինը
- 3) խողովակաշարայինը
- 4) ավտոմոբիլայինը

41

Ո՞ր գույգում տրված մարզերի համար է հանքային ջրերի արտադրությունը մասնագիտացման ճյուղ:

- 1) Արմավիրի և Արագածոտնի
- 2) Լոռու և Շիրակի
- 3) Տավուշի և Կոտայքի
- 4) Սյունիքի և Շիրակի

42

ՀՀ ո՞ր մարզի տարածքի զգալի մասն է ընկած Ազատ և Վեդի գետերի ավազաններում:

- 1) Արագածոտնի
- 2) Վայոց ձորի
- 3) Արարատի
- 4) Արմավիրի

43

Մինչև 1000մ բացարձակ բարձրության վրա է բնակվում ՀՀ բնակչության մոտ.

- 1) 64%-ը
- 2) 34%-ը
- 3) 44%-ը
- 4) 54%-ը

44

Տրվածներից ո՞րն է մքնուրսի մարդաժին աղտոտման աղբյուր:

- 1) փոշեհողմը
- 2) հրաբուխը
- 3) ծովային տրամապորտը
- 4) լեռնային ապարների քայլայումը

45

Մշակովի հողահանդակներով հարուստ է.

- 1) Նորվեգիան
- 2) Եգիպտոսը
- 3) Իսլանդիան
- 4) Ուկրաինան

46

Զրավազանները աղտոտող արհեստական նյութերից են.

- 1) ջրեկերում էներգետիկ նպատակներով օգտագործված ջրերը
- 2) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
- 3) քիմիական պարարտանյութերը
- 4) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը

47

Հողաբարելավման միջոցառում է.

- 1) օգտակար հանածոների հանքավայրերի շահագործումը
- 2) հողերի աղակալումը
- 3) գերխոնավ հողերի ցամաքեցումը
- 4) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը

48

Օգտակար հանածոների հանքաբարային և ոչմետաղային պաշարները, որոնք գտնվում են Երկրի մակերևույթում, ընդերքում, ծովերի, օվկիանոսների, լճերի ջրերում և օգտագործվում են տնտեսության մեջ կոչվում են.

- 1) հանքային ռեսուրսներ
- 2) հողային ռեսուրսներ
- 3) երկրակեղևի շերտեր
- 4) ռեկրեացիոն ռեսուրսներ

49

Զարտեզի վրա Աղսու գետը ո՞ր տառով է նշված:

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



50

Զարտեզի վրա Ստեփանավան քաղաքը ո՞ր տառով է նշված:

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է